ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/36Փ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման հանձնաժողովի նիստի

ք.Երևան **Մեկնարկ՝ «14» «ապրիլի» 2026թ.**
Ժամը՝ 15:00
Ավարտ՝ «06» «մայիսի» 2026թ.
Ժամը՝ 11:30

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ '*(ԳՊ/ԳԱՊ)*' Նորիկ Մնոյան

անդամներ՝

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Նարեկ Հայրապետյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Գևորգ Խեչումյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Ռիմա Հարությունյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավախորհրդատու (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Լաուրա Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)՝ Անի Բադալյան

1. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/36Փ ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 **ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/36Փ** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2026 թվականի ապրիլի 14-ին ժամը՝ 15:00-ին:**

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գները /գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված.

Հ/Հ	Հափաբաժնի անվանումը	գնվելիք ծառայությունների մատուցման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/
1	Մ-3,ՀՀ սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ72+000-կմ75+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների	850 500

	նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ	

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում

3.1. Հայտ է ներկայացվել հետևյալ մասնակցի կողմից.

N	**Մասնակիցների անվանումները**	**Հասցե /ՀՎՀՀ/**	**Էլ. փոստ**
1	«ԱՐՍ-ԱՆՆ» ՍՊԸ	ՀՀ, ք. Գավառ, Զ. Անդրանիկի 4 /08419808/	khachatryantatv82@gmail.com

4. Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակցի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթը կազմված էր հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

5.1 Հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացվել հետևյալ մասնակցի կողմից՝

Չափաբաժին 1 Մ-3,ՀՀ սահման – Մարգարա – Վանաձոր – Տաշիր - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ72+000-կմ75+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

Հ/Հ	**Մասնակիցների անվանումները**	**Գինն առանց ԱԱՀ**	**ԱԱՀ**	**Ընդհանուր**
1	**«ԱՐՍ-ԱՆՆ» ՍՊԸ**	**830 000**	**0**	**830 000**

6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/36Փ ծածկագրով գնանշման հարցման ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

6.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչել **«ԱՐՍ-ԱՆՆ» ՍՊ ընկերությանը:**

6.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել **ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2026/36Փ** ծածկագրով գնանշման հարցման արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

6.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը՝ անգործության ժամկետ կիրառելի չէ:

6.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել **«ԱՐՍ-ԱՆՆ» ՍՊ ընկերությանը:**

7. Տեղեկատվություն՝ կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

7.1 Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

8. Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

8.1 Մասնակիցների կողմից հրավերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	**Նորիկ Մնոյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Նարեկ Հայրապետյան**	.....
	Գևորգ Խեչումյան	.....
	Ռիմա Հարությունյան	.....
	Լաուրա Գևորգյան	.....
Քարտուղար՝	**Անի Բաղալյան**	.....